# ԹԵՄԱ՝ ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ

| Նախագծի անվանումը | Խաչատուր Աբովյան-արվեստ փոխադարձ կապը:Աբովյանի կերպարը արվեստում: |
|---|---|
| Առարկա (ներ) | Հայոց լեզու և գրականություն, արվեստ |
| Ուսումնական տարի, կիսամյակ | 2024-2025 ուստարի |
| Դասարան | 10 (հումանիտար) |
| Տևողություն | միջնաժամկետ |
| Նախագծի իրականացման փուլեր | 6 փուլ |
| Վերջնաժամկետ | դեկտեմբերի 13 |
| Տեսակ | միջառարկայական |
| Ձևաչափը | Անհատական , թիմային |

ՆՊԱՏԱԿԸ

1.խթանել սովորողների ինքնուրույն ճանաչողական գործունեության հմտությունները, նպաստել ստեղծագործական երևակայության զարգացմանը
2.զարգացնել սովորողների սոցիալական հմտությունները. խթանել նախաձեռնողականությունը
3.նպաստել վերլուծելու հմտությունների զարգացումը
4.զարգացնել համագործակցային աշխատանքներ իրականացնելու հմտություն
5.զարգացնել մեդիագործիքների տեսակների կիրառության հմտություններ՝ բարձրացնելուց մեդիագրագիտության մակարդակը
6.արժևորել, վերաիմաստավորել հայ գրականության մեջ Խ.Աբովյանի վաստակը, նրա ունեցած դերը հայ գրականության զարգացման գործում
7.ներկայացնել Խ. Աբովյանի ազդեցությունը հայ գրականության և արվեստի տարբեր ճյուղերի վրա
8.գիտակցել, որ արվեստն ու գրականությունը իրական կյանքի արտացոլանքն են
9.ընդլայնել գիտելիքները Աբովյանի ստեղծագործությունների թեմաների վերաբերյալ
10.ներկայացնել Խ.Աբովյանի կերպարի արտացոլումը արվեստի այլ ճյուղերում:

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՀՊՉ

*Աշակերտը կկարողանա՝*

կառուցի ընտրված թեմայի նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ խոսք, կիրառի հաղորդակցման տարատեսակ միջոցներ
Խ. Աբովյանի կնաքն ու գործունեությունը արտացոլող, արվեստի տարբեր ճյուղերում նրա կերպարի անդրադարձն արտացոլող գրքույկի ստեղծում:
Գրական- երաժշտական միջոցառման ներկայացում:

*Առարկայական չափորոշիչ և ծրագիր*

1. Ներկայացնի գրողի կենսագրությունը և գործունեությունը ըստ փաստերի և հուշագրության:
2. Ներկայացնի գրական երկի գաղափարը, հեղինակի ասելիքը, դրա նշանակությունը ժամանակի և տարածության համատեքստում:
3. Ուսումնասիրի գրողի կենսագրության և ստեղծագործության միջև առկա կապերը, արժևորի գրող-անհատին և քաղաքացուն:
4. Վերլուծի հասանելի տեղեկույթը, գնահատի փաստարկները, հայտնի սեփական տեսակետը:
5.Ճանաչի և գնահատի Խաչատուր Աբովյանին որպես արվեստագետ, լուսավորիչ, լեզվաշինարար:
6. Ներկայացնի արվեստի տարբեր ճյուղերի հետ Աբովյանի առնչությունը և ազդեցությունը, ինչպես նրա կերպարի արտահատությունը արվեստի տարբեր բնագավառներում:
7.Ցույց տա քնարական հերոսին բնորոշ հատկանիշները:

8.Դրսևորի համագործակցային և սոցիալական հմտություններ:
9.Ցուցաբերի մեդիագրագիտության հմտություններ:
10.Կարողանա գնահատել արժեքավորը, գեղեցիկը, բարձրակարգը:
11. Ձեռք բերի ստեղծագործական աշխատանք կատարելու կարողություններ:
12.Ձեռք բերի ասելիքը գեղարվեստորեն, անկաշկանդ արտահայտելու կարողություններ:

ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿԶԱՐԳԱՆԱՆ ԱՅՍ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

1.սովորել սովորելու կարողունակություն
2.ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն
3.լեզվական գրագիտություն և կարողունակություն
4.մշակութային կարողունակություն
5.ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն
6.թվային և մեդիա կարողունակություն

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

1.գրականություն. Խ.Աբովյանի կյանքի և գործունեության հիմնական փաստերը,
նրա ստեղծագործությունների թեմաները և ազդեցությունը:
«Վերք Հայաստանի» վեպի «Հառաջաբան»-ի ուղերձները:
Խ.Աբովյանի կերպարի գեղարվեստականացումը:
2. Նկարչություն. Խ. Աբովյանի կերպարի պատկերումը գեղանկարիչների կողմից:
Դիմանկարի ստեղծման պատմությունը:
3.Քանդակագործություն. Խ.Աբովյանի արձանի ստեղծման և տեղադրման պատմությունը:
4.Կինո և թատրոն. Ֆիլմեր Խ.Աբովյանի մասին:
Գրական- երաժշտական ցերեկույթի ներկայացում:
5.Երաժշտություն. երգեր՝ նվիրված Խ. Աբովյանին և նրա ստեղծագործություններին:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գրական հետազոտություններ,
2. Տեսանյութեր և փաստագրական ֆիլմեր
3. Արվեստի տարբեր ճյուղերում կերպարի բացահայտում
4. Այցելություն գրողի տուն- թանգարան
5. Գրավոր և բանավոր քննարկումներ

ՆԱԽԱԳԾԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Փուլ 1- Նախգծի իրազեկում: Ուսուցչուհին աշակերտներին ներկայացնում է նախագծի նկարագիրը, բացատրում՝ ինչ պետք է անեն այս նախագծի շրջանակում:Ձևավորվում է 12 հոգանոց խումբ՝ նրանց մանրամասն ներկայացնելով աշխատանքի ընթացքը:Սովորողները որոշում են, թե աշխատանքը ինչ ձևաչափով և վերջնարդյունքով են ներկայացնում:

Փուլ 2- Հետազոտություն: Սովորողները ուսուցչուհու ուղղորդմամբ հավաքագրում են նյութեր՝ գրքեր, հոդվածներ, տեսանյութ , քննարկում միմյանց հետ:

Փուլ 3- Տվյալների մշակում: Աշակերտները ներկայացնում են իրենց մշակումները: Աշխատանքի բաժանում են կատարում, թե ով որ հատվածի վրա է աշխատելու: Ձևավորում են գրքի՝ իրենց տրված բաժնի էջը:

Փուլ 4 – Անդրադարձ: Այց Խ.Աբովյանի տուն- թանգարան: Խորհրդատվական հանդիպում ուսուցչուհու հետ: Միջոցառման սցենարի քննարկում, դերերի բաշխում:

Փուլ 5- Վերանայում: Հետադարձ կապով ամփոփում են մշակումները, կատարում անհրաժեշտ փոփոխություններ վերջնական պրոդուկտ ստանալու համար:

Փուլ 6- Հանրային ներկայացում:Նախագիծը ներկայացվում է հետաքրքիր ձևաչափով և

| |
|---|
| ստեղծագործաբար:Իրականացվում է յուրաքանչյուրի գործունեության գնահատում: |
| ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ՀԱՄԱՌՈՏ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԵՆ՝<br>Նախագծի նպատակը,<br>որն է եղել խմբում յուրաքանչյուրի դերը և ներդրումը նախագծի իրականացման ճանապարհին,<br>ինչ չափով է արդյունավետ եղել թիմային համագործակցությունը<br>ինչ ձևաչափով են ներկայացնելու նախագծի պատրաստի պրոդուկտը<br>ինչ հմտություններ և կարողունակություններ է զարգացրել նախագծային աշխատանքը: |
| ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ<br><br>Աղիբեկյան Միլենա Արմենի<br>Գալստյան Նվարդ Բագրատի<br>Գրիգորյան Անի Արմենի<br>Ստեփանյան Մարինե Դավիթի<br>Իսրաելյան Նարեկ Ռուստամի<br>Խաչատրյան Լիանա Գագիկի<br>Հակոբյան Էմիլիա Գոռի<br>Հովհաննիսյան Թամարա Լևոնի<br>Մարգարյան Վարդգես Լեոնիկի<br>Նիկողոսյան Իռեն Էդգարի<br>Պետրոսյան Վահե Պետրոսի<br>Պողոսյան Մացակ Մարտունի |

ԳՆԱՀԱՏՈՒՄ

| ՉԱՓԱՆԻՇ | ԳԵՐԱԶԱՆՑ | ԲԱՎԱՐԱՐ |
|---|---|---|
| Ընկալում և հիմնախնդրի ներկայացում | Առաջադրանքները մանրակրկիտ է արված և հանձնարարվածից ավելին է ներկայացված: | Առաջադրանքները համապատասխանում են պահանջներին, սակայն հիմնականում իրականացվել է հանձնարարության սահմաններում: |
| Ինքնատիպություն | Մեղիագործիքներին տիրապետում են գերազանց, ստեղծագործական մոտեցում են ցուցաբերել կատարած աշխատանքի նկատմամբ: | Մեղիագործիքներին տիրապետում են մասամբ, ստեղծագործական մոտեցում չեն ցուցաբերել կատարած աշխատանքի նկատմամբ: |
| Նպատակի և վերջնարդյունքի համապատասխանություն | Վերջնական աջդյունքները համապատասխանում են նպատակին: | Արդյունքները լիովին կամ բավարար չեն համապատասխանում ներկայացված նպատակին: |